

# Հ Ա Յ Գ Ի Ր Ը Ե Ի Մ Ա Մ ՈՒ Լ Ը



րը յոյները և Հոռմի գաւաղները պարծենում էին իրենց անցեալ փառքով, իրենց Հոմերոսով, Հերոդոտով, Սոֆոկլէսով, Վիրգիլիոսով, Կիկերոնով և Պլուտարքոսով, հայերը վաղ կորցրել էին իրենց սեպագրերն և մեհենական գրերը և օգտուած էին արամէական կամ յունական տառերից: Իրենք քրիստոնէայ Բիւզանդիոն ու Ներոնապոլիսը բրիստոնէական սուրբ գրքե-

րը, մեղեդիներն ու աղօթքները մրմնջում էին յունարէն ու լատիներէն շարակարգուած գրքերից. հայ մտքի համար մեծ վիշտ էր, որ պարտաւորուած էր օտար ասորական և յունական տառերից օգտուել և վանել այն մայրենի հարազատ ու քաղցր լեզուն, որը իր դերագոյն կատարելութեան հասել էր քսան դարաշրջանի մշակութեամբ:

Եւ ահա ինչ ենք տեսնում սրանից դեռ հազար հինգհարիւր տարի առաջ իր նախնիքի տաղանդով ու հանճարով պարծեցող մտաւորական դասը երբէք չըկասեցաւ աշխարհատարած յունական և լատինական լեզուի առաջ, ստեղծեց, յօրինեց նոր տառեր և մի քանի տասնեակ տարիների ընթացքում ոչ միայն Աստուածաշնչի նման սոււար աշխատութիւն թարգմանեց և հրապարակ իջեցրեց, այլ առանց տատանելու, առանց երեւալու ոչ միայն եկեղեցական մեղեդիների, երգերի, աղօթքների ժամակարգութիւններ դասաւորեց, այլ և բազմահատոր գրեւածներով իր անցեալն ու ներկան ամփոփեց և ժառանգութիւն թողեց իրեն յաջորդներին:

Թէ ի՞նչ ճոխութեամբ էր կատարելագործուած հինգերորդ դարի մեր լեզուն և ինչ բարձրութեան վրայ էր կանգնած, այդ բանը հայ ներկայ ընթերցողին հասկացնելու համար, բաւական է նրան յայտնել, թէ մեր խիզախ նախնիքի այդ հսկայական գործը մի այնպիսի կատարելութեամբ էր պսակուած, որ գոռոզ Բիւզանդիան ու Հոռմը, երբ չէին կարողանում սուրբ գրքի լատին և յոյն թարգմանութիւնը բացատրել, նրանք իսկոյն դիմում էին մեր նախնիքի հինգերորդ դարում թարգմանուած Աստուածաշնչին, որ կարողանան ցանկացած բացատրութիւնը գտնել: Կաթողիկ եկեղեցին սուրբ էր հրատարակած մեր թարգմանիչների այդ գործը և անպայման ընդունելի նրա մեկնութիւնները:

Անշուշտ մի քանի տասնեակ ինտելիգենտներ մի քանի տասնեակ տարիներում չէին կարող այդպիսի մի կատարեալ լեզու ստեղծել, բարեկարգել և գործադրութեան դնել, եթէ լեզուն իր քսան դարու կուլտուրական անցեալը չունենար և նախորդներից ժառանգած չըլինէր զարգացած բառերի մի ընդարձակ գանձարան:

Այն, հինգերորդ դարի մեր ժրաջան թարգմանիչներին, հեղինակներին և սրանց յաջորդներին շատ պարտական է հայութիւնը, որոնք փրկեցին և մեղ հասցրին աւելի քան երեսուն դարի կուլտուրայով ճոխացած մի մեծ գանձարան: Անշուշտ, ինչպէս մեր նախորդները տասնհինգ դարի ընթացքում, նոյնպէս և՛

մենք, յաջորդներս խիստ մեծ պատկառանքով պիտի յիշենք, տօնենք այդ նախորդներին, որոնց համար այս տարի տասնհինգ դարի յօրելեանն է կատարում համայն հայութիւնը:

Ամեն մի ըմբռնող և զգացող հայ համոզուած է, թէ ի՞նչ վսեմ դեր է կատարել մեր ինտելիգենցիան հինգերորդ դարում: Առանց Մեսրոպեան տառերի, առանց այդ տառերով գրի անցած պատմութեան ինչով մենք պիտի տարբերէինք գնչուներից, բրդերից և նեղրերից: Այսօր մեզ վրայ էլ ամբողջ զիտնական աշխարհը նոյն հայեացքը պիտի ուղղէր, ինչ որ կատարում է Աւետարախայի և Պատագոնիայի վայրենիների վերաբերմամբ: Կուլտուրական երկրի, քաղաքակիրթ ցեղի յաջորդ լինելը մենք պարտական ենք հինգերորդ դարի այդ հսկայ գործունէութեան, որ մենք ժառանգել ենք և հպարտութեամբ վայելում ենք տասնհինգ դարից ի վեր:

Այնքան վսեմ էր այդ հսկայական գործը, որ ոչ միայն հինգերորդ և յետագայ դարերում այդ գործունէութիւնը խրախոյս դարձաւ և նորանոր մտքի հերոսներ արտադրեց աւերած և ասպատակուած հայ աշխարհում, այլ նա մի խթան դարձած շարունակաբար առաջ մղեց հայ մտաւորականներին: Թ.—ԺԱ. դարում Շիրակում, ԺԱ.—ԺԳ. դարում Կիլիկիայում մենք չէինք ունենալ այն հսկայական գրականութիւնը, եթէ հինգերորդ դարի գրական ժառանգութիւնը չունենայինք:

Այս ժառանգութիւնը մի այնպիսի հաստատուն ամբուսթիւն, նեցուկ էր հայութեան համար, որ նա հայութեանն օգնեց, նպաստեց և բարգաւաճեցրեց ոչ միայն հայ իշխանական հարստութիւնների շրջաններում, այլ նա հայ տարրը բարձրացրեց հարստութիւնների անկումից թէ առաջ և թէ յետոյ օտարների աչքում: Եթէ հայ գիրն ու գրականութիւնը հային չըբարձրացնէր մտաւորապէս, հոգեպէս և արևոտանըով, եթէ այդ գրականութիւնը մեր կուլտուրան չը հասցնէր ցանկալի վեհուցեան, հայը չըպիտի կարողանար զօրավարներ, սպարապետներ, կառավարչապետներ, կայսրուհի և կայսրներ տալ Բիւզանդիոնին: Եթէ հայը ընդածին գիր, գրականութիւն, գիտութիւն և արևոտ չունենար, հայի միտքն ու հոգին չը մարդէր առտնին կրթութեամբ, հայը չըպիտի կարողանար ատղանդներ ու հանճարներ ծննցնել, որոնք ոչ միայն իւրայինների, այլ և շատ ու շատ օտար երկ համակրանքին արժանացան և իրենց արժանաւոր դիրքը գրաւեցին հանրամարդկային պատմութեան շարքում:

Այդ գրականութիւնը ոչ միայն խրախուսեց հայութիւնը իրենց երկիրը սելջուկների, թաթարների և թուրքերի ձեռքն անցնելուց յետոյ, այլ նա այնպիսի խթան դարձաւ, որ աշխարհի շուրջը ցրած հայութիւնը կապեց իրար հետ: Ո՛չ միայն ընավայրում, այլ պանդխտութեան մէջ Մեսրոպեան գիւտը հայերին այնպիսի դիրքի մէջ էր դրել, որ հայերը ոչ միայն Խրիմում, Տրանսիլանիայում, Լեհաստանում, Ռուսաստանում գրկաբաց էին ընդունուում, ոչ միայն ազատ ապրելու ինքնավարութիւններ էին ստանում, ոչ միայն այդ օտար վայրում կուլտուրա էին տարածում, այլ ամեն տեղ իրենց առանձնայատկութիւնը պահպանում էին շնորհիւ այդ գրի և գրականութեան:

Գիրն ու գրականութիւնը մշտապէս այնպիսի խթան էր դարձած հայութեան համար, որ նա համաշխարհային որևէ յառաջագիմական քայլից չէր կարող յետ մնալ: Շնորհիւ գրի և թւագիտութեան հայը ինչպէս վաճառականական կապերով կապուած էր ամ-

բողջ Եւրոպայի հետ, ինչպէս միջին, նոյնպէս և նոր դարերում, այդ կուլտուրայի շնորհիւ համաշխարհային նորանոր գիւտերից նա երբէք ետ չէր մնում: Մտքի կուլտը այնպէս էր մարմնացած հայի մէջ, որ երբ գիրքը էժան տարածելու հնարներ էին գտնում արեւմուտքում, հայն անմիջապէս տքնում էր ետ չըմնալ Եւրոպայից: Ինչպէս մագաղաթի, թղթի արեւտը անմիջապէս մեր երկիրը մտաւ, այնպէս էլ տպագրութիւնը հայը իւրացրեց տպագրութեան գիւտից յիսուն տարի յետոյ:

Թէ մեր նախնիքը որքան անձնավստահ էին, ինչպիսի անվեհերութեամբ էին դորձում, իրենց մտաւոր ոյժերի մասին ինչ մեծ համարում ունէին, այդ մասին պարտաւար կազմելու համար բաւական է յիշեցնել, որ հայերի առաջին գրքի տպագրութիւնը կատարել է օսմանեան Սուլթան-Սէլիմ Վէսի օրով, որը Չալղրանի դաշտում Շահ-Իսմայիլին ընկճելուց յետոյ, դնաց Եգիպտոս, յափշտակեց Մէմլուկներից—Տօնամբու Սուլթանից խալիֆութիւնը և դարձաւ համայն իսլամութեան կրօնապետը:

Թէ ինչ սոսկալի էր հայութեան համար Սէլիմ Վէսի տամեհերու տարւան թագաւորութեան շրջանը, այդ հասկացնելու համար մեր ընթերցողներին կասենք, որ այս սուլթանը ամիրապետութիւնը (համալսամութեան կրօնապետի աստիճանը) ձեռք բերելուց յետոյ, մի առաւօտ հրամայեց, որ բոլոր քրիստոնեաներին— ի թիւս որոց և հայերին, կոտորել—ընաջինջ անել: Երբ օսմանեան հիւնքեարները ծրագրում էին ընդհանուր կոտորածով հայութիւնը ջնջել աշխարհի երեսից, հայի ձգտումը նրան հասցնում է Վենետիկ օրացոյց տպագրելու, տպագայ գործունէութեան ծրագրի «ՊԱՐՉԱՏՈՒՄ ԱՐԸ» պատրաստելու:

Հայի այս ձգտումը, հայի այս անվեհեր և խիզախ գործունէութիւնը նրան ոչ միայն մղում է անվերջ կուլտուրայական առաջ գնալու այլ նա սիրով անձնատուր է լինում գրական կեանքին, անխոնջ աշխատելով եւրոպական միտքը թարգմանում և մտցնում է երկրի ամեն կողմը: Այս ձգտումով հայի միտքը հալածւած հարգատ երկրից, թուրքական արհաւիրքներից, նա թափառում է Եւրոպայում և պարբերաբար տպագրում է այլ և այլ գրքեր, որ հնարաւորութիւն ունենայ էժան տարածել ժողովրդի ամեն մի շրջանում:

Իեռ չի բաւականանում հայը այդ գործունէութեամբ, նա տքնում է Եւրոպայից մամուլ բերել, մտցնել բարբարոս թիւրքիայի գանազան դաւաճները և հասցնել նոյնիսկ Էջմիածին: Ենիշէրների եաթաղանները, զուճարաւիշների ուղմբերը, Փէզուլլահ փաշաների շղթան, պարսիկ խաների և շահերի մտրակը չեն կարողանում հային բաժանել գրքից ու տպագրութիւնից, նա ոչ միայն իր կուլտուրայի շնորհիւ ազատում է իրար ետեից սպառնացող ջարդերից, պաշտպանում է մինչև Ի. դար իր գոյութիւնը, այլ նոյնիսկ ձոխացնում է իր գրադարանը բազմաթիւ գիտական և գեղագիտական հատորներով:

Այն անձնավստահ, խիզախ ոգին, որ գրել էր մեր գրականութիւնը հայի սրտի խորքում, այն աէրը միշտ դէպի յատաջադիմութիւն, որ ժառանգել էինք մեր նախորդներից և պանպանել տասնևհինգ դար շարունակ, այսօր պանպանում ենք թէ ոչ—անա այս հարցը ես կրտայի ամեն մի հայ ընթերցողի:

Ցաւելով պիտի ասենք, որ այսօր ամեն մի հայ այնքան է հայութիւնից խորթացել, որ ոչ միայն լիովին անտեղեակ է իր պայքերի երեսուն դարի անցեալից, այլ նա իր նախորդներին, այդ պատկառելի գործիչներին չի գանազանում անկուլտուրական գնչունեւրից, քրդերից և վայրենի նեգրերից:

Ի՞նչն է հային հասցրել այդտեղ... «Ժանիր զընգի»—բեզ ճանաչիր—ի բացակայութիւնը:

# Գիր և տպագրութիւն



## 1.

Նութեան անյիշատակ ժամանակներում հնարւեցան նշանակներ, որոնք գրոշմաւելով զանազան իրեղէնների վրայ՝ ներկայացնում էին ձայներ, այդպիսով խօսքի միջոցով արտայայտւած մարդու միտքը հաղորդում էր մօտաւորից հեռաւորին, ներկայից անսահման հեռու ազապային:

Ձայների նշանակները կամ գրերը տպաւորելու համար նախ և առաջ գործ էին ածում քար կամ փայտ և առաջին գրիչն էր ամուր երկաթէ քանդակիչ սուր ձողիկը:

Սուրբ գրքից յայտնի է, որ Մովսէս տասնաբանեայ պատւիրանները քանդակել էր երկու քարեղէն տախտակների վրայ: Չորս հազար տարի առաջ եգիպտացիները ամբողջ պատմութիւններ և աւանդութիւններ էին փորագրում իրանց բուրգերի պատերի վրայ: Յետոյ սկսեցին գրել աղիւսների և մետաղեայ թիթեղների վրայ: Պարիզի ազգային մատենադարանում արծաթախառն արճիճի մի տախտակի կտոր կայ, որ հռովմէացիները Քրիստոսի Ծննդից հարիւր տարի առաջ գտել են Իսպանիայի արծաթահանքերում. այդ մետաղի տախտակի վրայ խոշոր տառերով գրոշմաւած են երկու ձեռնարկողների անուններ: Յոյների ու հռովմէացիների պաշտօնական դոկումենտները փորագրում էին քարէ կամ բրոնզեայ տախտակների վրայ ու շարւում էին պատերի երեսով. իսկ եթէ տախտակի երկու երեսն էլ գրւած էին լինում, այն ժամանակ կախում էին այնպէս, որ երկու երեսից էլ կարդացւէր:

Ասորեստանում հնարեցին կաւէ տախտակների կամ խոոր աղիւսների վրայ գրելը, որով կաւէ տախտակների ամբողջ գրադարաններ էին կազմում, ուր թւահամարներով հիմակւայ պէս՝ կարելի էր մի շարադրութիւն ջոկել և կարգաւ: Միայն նինուէի աւերակներից մեր դարում հնախոյզներն այնքան գրած աղիւսներ են հանել, որ նրանց վրայի գրւածները եթէ տպագրւէին, կըդառնար տպած 20,000 in folio երես: Այդ կաւէ տախտակների վրայ գրում էին նրանց թաց ժամանակ. գրում էին սեպագրերով և քողդէարէն լեզուով, որ Քրիստոսի Ծննդից դեռ 1700 տարի առաջ արդէն մեռած էր համարւում: Ուսումնականները բուն ճիգեր թափելով վերջապէս յաջողել են կարդալ այդ սեպագրերը: Հարկ չըկայ ասել, որ կաւային գրքերը շատ ծանր էին ու շատ տեղ էին բռնում. օրինակ թէ որ Times լրագրի մի №-ը գրէինք այդ աղիւսների վրայ, հազիւ տասն մշակ կարող էին տանել նրանց:

Գրւածքի աւելի յարմար նիւթ հնարեց մեր լուսաւորութեան երկրորդ սերանում՝ այն է եգիպտոսում, դա էր պապիրուսը. պապիրուսը 8-12 ոտնաչափ բարձրութեամբ, թանձր, եռանկիւնի բնով խոտաբոյս է, որ խտութեամբ աճում է եգիպտոսի, Պալեստինի և Սիկիլիայի ճահճային տեղերում. նրա բնիկեղևները պոկում, նախ թրջում, ապա չորացնում հարթացնում էին ու գրում էին նրա միայն մի երեսի վրայ. պապիրուսի մի քանի թերթեր իրար կպցնելով՝ դառնում էր մինչև երեսուն կանգուն երկարութեամբ մի թերթ կամ մի ամբողջ գիրք, որ փաթաթւում էր մի փայտեայ դրանակի վրայ և դրւում էր կաշեայ պարկում ու դարանների շարքերի վրայ. այդ ձևով էին կազ-

մում հին գրադարանները: Պատմագետներն ամենահին պապիրուսը համարում են Բրիտանի Մոնպից 3500 տարի առաջ: Վեզով սարի հրաբխային արտախժման տակ թաղած քաղաքը երբ բացւեց, այնտեղ գտնւեց մի գրատուն 2000 հատոր վերոյիշեալ ձևի յունարէն ու լատիներէն պապիրուսի գրքերով, որոնք ամենքն էլ սակայն անխառն էին: Պապիրուսի լաւ և վատ տեսակը կար և երբեմն այդ բոյսի հունձը երբ անյաջող էր լինում, շատ նեղութիւն էին կրում, և Տիրերիոս կայսրի ժամանակ ժողովրդային ապստամբութիւն իսկ ծագեց այդ պատճառով: Պապիրուսը էժան չէր. օրինակ Յունաստանում Պերիկղեսի միջոցին մի կտոր պապիրուսն արժէր մի բուրլի, որ երկու հարիւր անգամ թանկ է քան այժմեայ անգլիական ամենաընտիր թղթի մի թերթը:

Երկրորդ դարում Բրիտանի Մոնպից յետոյ լոյս ընկաւ պապիրուսի զօրեղ ոսոխը՝ մագաղաթը կամ պերգամէնտը. կաշին արեւելքում վաղուց ծառայում էր գրելու համար, օրինակ հին պարթևների քրմական գրքերը գրւած էին 1200 հզի կաշի վրայ: Հրէաները կաշիի այնպիսի երկար փաթաթ էին շինում, որ նրա վրայ տեղաւորում էր Մովսէսի ամբողջ հնգամատեանը: Մագաղաթի ծագման մասին աւանդութիւն կայ, որ փոքրասիական թագաւոր Էմէն II-ը ցանկա նալով մատենադարան հիմնել, չըկարողացաւ Եգիպտոսից պապիրուս ստանալ, վասնզի Պտղոմէաններն արգելել էին նրա արտահանութիւնը, երկիւղ կրելով, որ իրանց հռչակաւոր մատենադարանին մրցող դուրս կըգայ: Այն ժամանակ Էմէնը հրամայեց իր Պերգամ քաղաքում կաշից գրելու նիւթ պատրաստելու գործարան հիմնել: Մագաղաթը պատրաստում էին այժի, ոչխարի կաշուց, աւելի բարակ ու աղնիւ տեսակը գառան կամ հորթուկի կաշուց: Ամենանուրը մագաղաթը շինում էին մարդու կաշուց. XIII դարում Պարիզի մատենադարում եղած մի լատիներէն Աստածաշունչ գրւած է եղել կանացի, յիշաւի պարմանալի նուրբ, կաշիի վրայ:


Մագաղաթը ի հարկէ պապիրուսից թանկ էր ուստի մի անգամ գրւած մագաղաթի վրայից գրքերը զանազան հնարներով ջնջում էին և նորից գրում. մեր ժամանակում քիմիական միջոցով կարողանում են դուրս վերարտադրել մագաղաթից հին կամ նախկին գրւածները. այդպիսի ձեռագիրներն այժմ կոչւում են պալիմպսեստներ, որոնք պահւում են Եւրոպայի գաւազան գրադարաններում. օրինակ Ս. Պետրբուրգի կայսերական մատենադարանում կայ մի պալիմպսեստ, որի վրայ V դարում նախ գրւած է եղել յունարէն, ապա ասորերէն ու յետոյ վրացերէն: Մագաղաթի լոյս ընկնելուց գրքերն ստացան այժմեայ իրանց ձևը՝ քառանկիւնի թերթեր մի կողմից կարած:

Ներկայ գործածական թղթի սկզբնաւորութիւնն այնպիսացած է խոր հնութեան մէջ: Ինչպէս յայտնի է, մարդկութեանը բարեբարող շատ գիւտեր վերագրում են շինացիներին. վառօդ, կողմնացոյց, բամբակե թուղթ և այլն բոլորը հնարած են շինացիները. սակայն եւրոպացիները այդ ամենին հասան իրանց խելքով, թէպէտ աւանդաբար պատմում են, որ թղթագործութիւնը Չինաստանից անցել է Թուրքստան, այնտեղից Արաբիա, Իսպանիա և Իտալիայ: Տպագրութեան հնարումից մի դար առաջ արդէն Եւրոպայում կային քաղմաթիւ թղթի գործարաններ: Գրելու գործիքները կամ գրիչները ուղղակի երկաթեայ բիզեր էին, երբ գրում էին տախտակի վրայ. պապիրուսի և թղթի վրայ գրում էին եղեգնով, որ կոչւում էր դալամ. գրում էին և սազի փետուրով. Եւրոպայում XIV դարից սկսեցին գրել երկաթէ գրչով, որ այժմ համա-

տարած ամբողջ աշխարհում գործածական է: Սե թանաքի գործածութիւնն էլ շատ հին է և պատրասուում էր քաղմատեսակ նիւթերից: Յոյներին և հռովմէացիներին թէպէտ յայտնի չէր տպագրութիւնը, այնու ամենայնիւ հեշտ էր գրքերի շուտափոյթ տարածումը. ամեն գրավաճառ իր խանութին կից ունէր մի մեծ լուսաւոր սենեակ, ուր երկու երկայն շարքով նստած էին տպագրողները, մէկը բարձրանում էր ամբիոնի վրայ և բարձր կարգում էր հրատարակելի ձեռագիրը, միւսները գրում էին և շուտով ցանկացած օրինակով գրքերը պատրաստ էին վաճառահանելու համար. այդ ձևով հին ժամանակում ձեռագիր յայտարարական թերթ կամ լրագիր էլ կար, որ ուղարկւում էր հեռաւոր նահանգները և ամեն տեղ կարճ միջոցում իմանում էին նոր վաճառուող գրքերի լոյս տեսնելը: Լաւ գրավաճառները պահում էին և մի հմուտ գրամատիկոս, որ սրբագրում ուղղում էր սխալ արտագրած ձեռագիրները. դրանք աւելի թանկ էին գնահատուում. թանկ էին մանաւանդ հեղինակների ինքնաձեռագիրները: Գրավաճառների մօտ բացի դրանից ժողովում էին խօսելու մատենագիրները, գրասէրները, և ընթերցասէրներն էլ չնչին վարձ վճարելով կարող էին կարգալ այդ տեղ նոր դուրս եկած գրքերը: Միջին դարերում գրականութիւնն անցաւ արեղանների ձեռքը և մենաստաններն էին ժամանակի միակ և գլխաւոր գրավաճառները, մատենադարանները և այնտեղ էին կեդրոնացած կրօնաւոր քաղմաթիւ արտագրողները: Արեղանները ձեռագիրները զարդարում էին ծաղկանկարներով և պատկերներով ու այդ մասում նրանք հասան զարմանալի շքեղ կատարելութեան: Սակայն արտագրութեան վրայ գնում էր շատ ժամանակ ու աշխատութիւն և գրքերը խիստ թանկ էին, օրինակ մի ասուածաշունչն արժէր հազարից մինչև երեք հազար բուրլի: Երբեմն մի զարդարուն գիրքը փոխւում էր մի ամբողջ կալւածքի հետ: Ընթերցանութեան տւած գրքի համար մեծ վճար էին վերցնում: Միջին դարերում յաճախ մատենադարաններում մատենաները շղթայով բեռում էին պատին, որ ընթերցողները չըզայթակղւեն մեղք գործել: այսինքն գիրքը տանել սեպհականելու համար, որ անսովոր երևոյթ չէր:

Միջին և հասարակ դասի համար գրքերը բոլորովին անմատչելի էին. նրանց միակ ուսուցանողն էր քահանան եկեղեցում: Գրքերն ընդհանրացնելու համար անհրաժեշտ էր նրանց ձեռագրական եղանակի արտագրութիւնը վերածել մեքենականի, այսինքն փոխարէն գրելու՝ տպել:

Մարդկութեան համաշխարհային պատմութեան մէջ տպագրութեան հնարումը ամենալուսաւոր էջերից մինն է: Գիտութեան պատմութիւնը մեղ ցոյց է տալիս, որ հանճարեղ գաղափարները և մեծ գիւտերը յանկարծակի, միանգամից չեն լոյս ընկել, այլ աստիճան առ աստիճան, երկար ժամանակեայ նախապատրաստութեան պտուղ և ծնունդ են. պարզ նախնական մտքից տակաւ առ տակաւ ծնել են աւելի բարդ մըտքեր: Տպագրութեան որպէս նախալերջին մի գաղափար պիտի յիշենք այստեղ զանազան մանր զարդերի և նկարների փայտի վրայ փորելը և գրոշմելը ձեռով թղթի վրայ, մանաւանդ դա վերագրում է թղթախագրի այդ ձևով տպելուն 1300 թւականի մօտերը: XII և XIII դարերում փայտի վրայ փորագրած պատկերներ էին տպում մետաքսէ կտորների վրայ: Յետոյ սկսեցին այդ փորագրած պատկերների տակը խօսքեր ու խրատներ փորագրել. այստեղից արդէն մի քայլ էր դէպի այն միտքը, որ մի ամբողջ հրես գրւածք փորագրում էր փայտի վրայ. այդպիսի ամբողջական փորագրած տախտակներով տպած գրքեր էլ հասած



են մեզ, որոնց ամենամեծը 50 թերթից է բաղկացած: Դրանք են մանր աղօթագրքեր կամ դասստեօրեր: Այժմ այդ «տախտակով» տպած գրքերը շատ հազ ա- գիւտ են, այնպէս որ անգլիական մի լորդ նրա մի օրինակը գնել է 1500 ռուբլիով: Սակայն տախտակով տպելը մեծ անյարմարութիւններ ունէր. օրինակ Աս- տուածաշունչը տպելու համար հարկաւոր էր հազար տախտակի վրայ փորագրել նրա ամբողջ բնագիրը: Տախտակով տպելը այնուամենայնիւ շատ զարգացաւ և տարածւեց. փոխանակ արտագրողների այժմ կային փայտի վրայ փորագրողներ և տպողներ: Ուրեմն փո- րագրած տառերը կային, միայն նրանք անշնորք էին և իրար կպած. մի քայլ էր մնացել անելու, այսինքն շարժական տառեր հնարելու, նրանց իրար մօտ շարե- լով մտքեր արտայայտել և տպել: Այդ քայլն անելու բախան ունեցաւ մարդկութեան մեծ բարերար Յոհան Գութենբերգը:

1564-ին Մոսկւայում, 1567-ին Վենետիկում հայերէն, 1640-ին Հրահային Ամերիկայում:

Գեղեցիկ տպագրութեամբ յայտնի էր այն ժա- մանակ Վենետիկի Ալդ Մանուցիի տպարանը. տպա- րանատէրերը միևնոյն ժամանակ և գրավածաւանդ էին: Գրքերը սովորաբար տպում էին երեք հարիւր օրինակ. առաջ ամբողջ թերթը մի երես էր կազմում, յետոյ ծալեցին չորսի, ապա և 1500 թւին 12-ի: Շատ շուտով նոր կանոնադրութիւն դուրս եկաւ գրքերի գնի ու բովանդակութեան վերաբերեալ. Պարիզի հա- մալսարանը գրքերի սակագին նշանակեց և կառա- վարութեան ու հոգևորականութեան կողմից հսկում էր նրանց բովանդակութեան վրայ: Գերմանիայի Մաքսիմիլիան կայսեր և Ֆրանսիայում Լուդովիկոս արքայի հիմնած փոս-ը օժանդակ եղաւ գրքերի արագ տարածման:

Մինչև 1500 թիւը լոյս տեսան՝	
Վենետիկում	2836 տեսակ գիրք.
Միլանում	625 « »
Բոլոնիայում	298 « »
Հռոմում	929 « »
Պարիզում	751 « »
Լոնդոնում	130 « »

Ուրեմն լուսաւորութեան կողմից առաջին տեղն էր բռնում Իտալիան, և Վենետիկն էր տպագրական գործում առաջին քաղաքը ամբողջ Եւրոպայում: 1563 թւին նոյն Վենետիկում լոյս տեսաւ և առաջին լրա- գիրը, որ կոչւեց Գազէթ. այդ լրագրի թերթը ծախ- ւում էր իտալական երկու կոպէկանոցի արժողութեամբ մի դրամով, որի անունն է Գազէթ. այդ դրամի անունն անցաւ և լրագրին. 1631-ին լրագրութիւնն սկսեց Ֆրանսիայում. 1588-ին Անգլիայում. դրանց օրինակ- ները մինչև հիմա պահւում են Լոնդոնի թանգարա- նում:

Գերմանիայի Ախէն քաղաքում կայ ամբողջ աշ- խարհի լրագրների թանգարան. այստեղ ժողովւած է մինչև 40,000 տեսակ զանազան լեզուների լրագիրներ:

Ն. ար. ՏԻՐ-ԱՎԵՏԻՔԻԱՆԻ.

II.



տպագրութեան գործի աճումն առաջին տարիներումն իսկ զարմանալի էր և անսովոր արագութեամբ տարածւեց Եւրոպայում: Դեռ Գութենբերգի կեն- դանի ժամանակ տպարաններ բացւե- ցան Բամբերգ, Կեօն և Հարլիմ: 1464 թւին տպագրութիւնն անցաւ Իտա- լիա. 1470-ին Ֆրանսիա, իսկ Հռոմի մօտ Սուրբիակօ վանքում 1466-ին լոյս տեսաւ առաջին իտալական հրա- տարակութիւնը: 1468-ին տպարանը փոխադրեց Հռոմ: Իտալիան այն ժամանակ կրթութեամբ անհամեմատ շատ աւելի բարձր էր կանգնած, քան ամբողջ Եւրոպան, և Իտալիայի շնորհքին է պարտա- կան Եւրոպան, որ նոր արեւստը ծաղկեց և տարած- ւեց: Պապիւրը և հոգևորականութիւնը մեծ ոգևորու- թեամբ վերաբերեցին դէպի նոր արեւստը: Հռոմից տպագրւած գրքերը սփռեցին արեւմտեան Եւրոպայում. 1470-ից մինչև 1500 թիւը միայն Հռոմում տպագրե- ցան 5400 տեսակ գիրք:

Եւրոպայում տպագրութիւնը տարածւեց հետեւեալ ժամանակագրական կարգով. 1440 թւին Գութենբերգն արաւ իր առաջին տպագրական փորձերը, 1455-ին լոյս տեսաւ առաջին տպագրւած գիրքը. 1464 թւին տպագրութիւնը երևաց Իտալիայում, 1470-ին Ֆրանսիայում, 1473-ին Նիւրնբերգում և Հոլանդիայում, 1474-ին Իսպանիայում, 1477-ին Անգլիայում, 1481-ին Լէյպցիգում, 1484-ին Բանիմարքայում, 1483-ին Շե- դիլում, 1478 Չեխիայում, 1484-ին Պորտուգալիայում, 1491-ին Լեհաստանի Կրակովում, 1494-ին Չեքոսլովա- յիայում, 1492-ին Աւստրիայում, 1525-ին Վիէնայում:

